



1. Ավանդ, իմ Տէրս խաչին վրայ
Մեռաւ արիւնլուայ,
Իր կեանքն յօժար յանձնեց մահուան,
Փրկել որդ մ'իւնձ նման:
Խաչին տակ (2), ուր ես նախ լոյս տեսայ,
Եւ մեղքիս բեռն ինկաւ հոն իսկոյն,
Հաւատքով ես հոն տեսութիւն ստացայ,
Ես արդ երջանիկ եմ օրնիբուն:

2. Ան իմ յանցանքներուս համար
Ո՛հ, ի՛նչ գութ անսահման,
Կըրեց տագնապ, վիշտ չարաչար,
Սիրով մ'անզուգական:

3. Արևն յերկինս ամօթահար
Ծածկեց իր դէմքը լոյս,
Զի մարդկութեան մեղքին համար
Մեռաւ իմ Տէր Յիսուս:

4. Բայց ողբ, արցունք, ո՛հ, չեն կրնար
Իմ պարտքըս վճարել.
Ահա, ո՛վ Տէր, իմ կեանքս յօժար
Կուգեմ քեզ նըւիրել: